# ԼՈՒՐԵՐ ԼՂԻՄ–ԻՑ

## ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

* * *

Հերհերի լեյտենանտ Նմիդաի անվան կոլտնտեսության հացագործները արդեն զեկուցել են հացահատիկային կուլտուրաների պետվաճառքի տարեկան պլանը կատարելու մասին: Պլանային 220-ի դիմաց մթերակայան ուղարկելով ավելի քան 222 տոննա հացահատիկ, Հերհերի հացագործները ձեռնամուխ են եղել նաև նոր բերքի հիմնադրման նախնական փուլի աշխատանքներին:

Տնտեսության հացագործները հացահատիկային կուլտուրաների հեկտարի միջին բերքատվությունը հասցրել են 31,3 ցենտների, որը զգալիորեն բարձր է շրջանի միջինից:

* * *

Շրջանում հավուր պատշաճի է կազմակերպված բանջարանոցային կուլտուրաների մթերումների և բնակչությանը բանջարեղեն մատակարարելու աշխատանքը: Ավելի քան 500 տոննա բանջարեղեն են մթերել մարտունեցիները՝ լուրջ նախադրյալներ ստեղծելով պլանային 990 տոննա բանջարեղենի մթերման բնագծերը նվաճելու համար:

Շրջանի Միչուրինի անվան, Թումանյանի անվան, «Կոմունիզմ», Լևոն Մկրտչյանի անվան, Արարբեկյանի անվան, Իլյիչի անվան կոլեկտիվ տնտեսությունների և Կարմիր շուկայի պետական տընտեսության բանջարաբույծները պարտավորվել են բնակչությանը առաքել զգալի քանակությամբ արտապլանային արտադրանք:

Է. ԽՍԱՅԱՆ